



«21» 08 2017р

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔԵՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻԶԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՇԽԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

FΦ 76

Ձեռնարկողը՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈԼԴՐԸ ՄՊԸ

Ք. Արմավիր, Շահումյան 3 եղբ, լր. 4

Գործունեությունը՝

**Արագածի պեղլիքի հանքավայրի օգտակար հանածոյի
արդյունահանման շրջակա միջավայրի վրա
ազդեցության գնահատման հաշվեդրվություն**

«Հրապան միջավայրի վրա սկսության կենտրոն»

Գ. Սահմանադրություն



Ասդիր Եղբակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՀԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 76

<21> 08 2017թ.

«Արագածոտնի մարզի Արագածի պեղլիքի հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն»

Արագածոտնի մարզի
Արագածի պեղլիքի հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝
Փաստաթղթի տեսակը՝

Տեղադրման վայրը՝

«ՀԻԴԵՆ ԳՈԼԴ» ՍՊԸ
Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
/Ա կատեգորիա/
«Արագածոտնի մարզ,
Արագածավան համայնք»



«Արագածոտնի մարզի Արագածի պեղլիքի հանքավայրում «ՀԻԴԵՆ ԳՈԼԴ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվում է իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանում: Տրամադրվող տեղամասը գտնվում է «Արագածոտնի մարզի Շալինի տարածաշրջանում, Արագածավան գյուղից 4-5կմ հյուսիս-արևելք՝ 1340.0-1250.0մ բացարձակ բարձրությունների վրա: Մոտակա բնակավայրերն են՝ Արտենի, Կանչ, Հակո և Արեգ գյուղերը, որոնց հետ հանքավայրը կապված է բարեկարգ ավտոճանապարհներով:

Հանքավայրը տեղադրված է Արտենիի հրաբխային զանգվածի արևմտյան նախալեռնային մասում, իրենից ներկայացնում է անտառազուրկ լեռնային շրջան՝ բնորոշ բլրային ռելիեֆով և սակավ խոտաբառական ծածկով: Տեղամասի կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են՝ $40^{\circ} 21'$ արևելյան երկայնության, $43^{\circ} 40'$ հյուսիսային լայնության:

Հանքավայրի տարածքն ունի աղքատ գետային ցանց, ամենախոշորը Մաստարա սելավն է, որն անցնում է հանքավայրի արևմտյան մասով:

«Արագածոտնի մարզի Արագածի պեղլիքի հանքավայրի հաշվեկշռային պաշարները՝ որպես հումք փքված պեղլիքի ստացման և կանագիտի արտադրության համար, հաստատվել են 1976թ նոյեմբերի 19-ին ՊՏԸ թիվ 7732 արձանագրությամբ, հետևյալ կարգերով և ծավալներով՝

- փքված պեղլիքի ստացման համար՝ В կարգով՝ 44069.4 հազ. մ³ և С1 կարգով՝ 44577.6 հազ. մ³

- կանագիտի արտադրության համար՝ В կարգով՝ 31789.0 հազ. մ³ և С1 կարգով՝ 41154.6 հազ. մ³:

Բացահանքի օտարման տարածքը կազմում է 66.15հա, նրա վերջնական եզրագծի սահմաններում ներառված օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարը կազմում է 10 319 400 մ³ ծավալ, արդյունահանվող պաշարների քանակը՝ 9 393 500մ³: Տեղամասում

մշակվելու է տարեկան՝ 206 388 մ³ արտադրողականությամբ պեղիտի մարգող պաշար և 187 870 մ³ արդյունահանվող պեղիտի տարեկան պաշար: Ծառայման ժամկետն ընդունվել է 50 տարի:

Հանքավայրի տարածքում մակաբացման ապարները ներկայացված են մինչև 0.46մ հզորության ժամանակակից դեյուվիալ-այլուվիալ-պրոյուվիալ նստվածքներով, որոնք ներկայացված են ավագակավերով, ավագներով, խճով, գնդիկների տեսքով գլաքարերով և անդեզիտաբազալտների կտորներով: Օգտակար շերտախմբի մակերեսային տեղադիրքը, գրունտային ջրերի բացակայությունը և մակաբացման ապարների հզորությունը ստեղծում են բարենպաստ պայմաններ հանքավայրի շահագործումը բաց եղանակով, առանց հորատապայթեցման աշխատանքների: Տրամադրվող տարածքում բացակայում են մակերևութային ջրային ռեսուրսները, ստորգետնյա ջրային հոսքերը, սողանքային և գեղողինամիկ երևույթները:

Նախագծված բացահանքը վերջնական եզրագծի սահմաններում բնութագրվում է հետևյալ պարամետրերով.

- Բացահանքի դաշտի առավելագույն երկարություն - 1260մ,
- Բացահանքի դաշտի առավելագույն լայնություն - 892մ
- Օգտակար հանածոյի ամենամեծ հզորություն - 31.3մ
- Բացահանքի օտարման մակերես - 66.1հա
- Մակաբացման ապարներ՝ ներառյալ հողաբուսական շերտ - 2786000մ³,
- Մակաբացման ապարների միջին հզորություն - 0.46մ
- Մակաբացման միջին գործակից - 0.34մ³/մ³:

Մակաբացման ապարները սկզբում նախատեսվում են տեղափոխել և տեղադրել բացահանքի սահմաններից դուրս՝ հարավային սահմաններում ժամանակավոր լցակույտում, հետագայում տեղափոխվում են արդյունահանված տարածք՝ ստեղծելով ներքին լցակույտառաջացում: Արդյունահանված պեղիտները ավտոինքնաթափով տեղափոխվելու են 3 կմ հեռավորության վրա գտնվող ջարդիչ-տեսակավորող կայանը:

Բացահանքի բացումն իրականացվելու է 1340 մ բարձրության հորիզոնից: Հանքավայրի հարավ արևելյան մասով անցնող ավտոճանապարհի 1260 մ բարձրության կետից նախատեսվում է կառուցել 1080 մ երկարությամբ՝ 8 մ լայնությամբ ավտոճանապարհ, որն աստիճանաբար կտրտվելով կհասնի 1320 մ բարձրության հորիզոն: Բացահանքի մշակման համար նախատեսված է ընդլայնական ընթացաշերտերով, միակող մշակման համակարգ, որի տարրերն են՝

- աշխատանքային հանքաստիճանի բարձրություն՝ 5մ,
- հանքաստիճանի թեքության անկյուն՝ 55°,
- հանքակողերի թեքության անկյուն՝ 45°,
- անվտանգության առավելագույն լայնություն՝ 2մ,
- աշխատանքային իրապարակի ամենափոքր լայնություն՝ 30մ:

Բացահանքում արդյունահանման աշխատանքները կատարվելու են էքսկավատոր-ավտոինքնաթափ-բուլդոզեր լեռնային համալիրի միջոցով: Հանույթային և բարձման աշխատանքներն իրականացվելու են էքսկավատորով, օգտակար հանածոյի տեղափոխումը ջարդող-տեսակավորող կայանք իրականացվելու է ավտոինքնաթափով:

Լցակույտի ստեղծումը բուլդոզերային եղանակով է: Լցակույտի գրաղեցրած տարածքը կկազմի՝ 3.92 հա, միջին բարձրությունը՝ 7.1մ, կողի առավելագույն թեքման անկյունը՝ 35°: Լցակույտերի տակ, անձրևաջրերի հեռացման նպատակով ծորակում նախատեսվում է 2մ տրամագծով երկաթբետոնե խողովակ: Նախատեսված է նաև 1մ տրամագծով երկաթբետոնե խողովակ ավտոճանապարհների այն մասում, որտեղ կան ծորակներ:

Հահագործման 25-րդ տարվանից սկսած N1 լցակույտերում պահեստավորված մակաբացման ապարները աստիճանաբար կտեղափոխվեն արդյունահանված տարածք՝ 1290.0-1265.0մ բարձրության հորիզոնների վրա փոփով 0.5մ բարձրությամբ և հարթեցվում՝ ստեղծելով ներքին լցակույտառաջացում:

Հետագայում, շահագործման ավարտից հետո մնացած մակաբացման ապարները՝ 18 900մ³ ծավալով պետք է տեղափոխվեն 1250.0մ բարձրության հորիզոններ՝ լեռնատեխնիկական վերականգնում իրականացնելու համար:

Հանքավայրի շահագործման ժամանակ ջուրը նախատեսվում է օգտագործել հարթակների ջրանի, հրատասեպային աշխատանքների, ինչպես նաև անձնակազմի կենցաղային կարիքների ջրօգտագործման նպատակների համար: Տեխնիկական և խմելու նպատակով անհրաժեշտ ջուրը նախատեսվում է բերվել ջրատար մեջենաներով: Հաշվետվությունում հաշվարկվել է ընդհանուր ջրապահանջը, այդ թվում՝ 11000մ² տարածքի ջրանման համար օրեկան ծախսը կկազմի 5500լ. իսկ կենցաղային կարիքների համար այն կկազմի՝ 94.6.1 մ³/տարի, կամ 0.34մ³/օր: Կենցաղային կեղուաջրերը՝ 0.19մ³ օրեկան ծավալով հեռացվելու են կեղուաջրերի հավաքման հոր, որտեղից սահմանված կարգով պետք է տեղափոխվեն քաղաքային կոյուղու ցանց:

Բացահանքի մշակված տարածքում հավաքվող անձրևաջրերը կարող են ինքնահոս հեռանալ, կամ ճեղքերով ներծծվել հատակի ապարներ:

Բացահանքի աշխատանքների կազմակերպման համար կառուցվելու է արտադրական հրապարակ՝ իր անհրաժեշտ կառուցներով, իսկ աշխատողների կենցաղային կարիքների ապահովման համար նախատեսված է վագոն-տնակներ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունում գնահատվել է հանքավայրի շահագործման ընթացքում բնապահպանական և սոցիալական ռիսկերը, որոնք պայմանավորված են՝ լեռնակապիտալ աշխատանքների և հանքավայրի շահագործման ընթացքում օդային ավազանի աղտոտմամբ, հողային ռեսուրսների աղտոտմամբ՝ արտահոսքերով, արտադրական թափոններով, լցակույտերով և կենցաղային աղբով, ինչպես նաև շահագործողական աշխատանքների ընթացքում մերձակա բնակչությանը պատճառվող անհանգստությամբ: Ներկայացվել են նշված ազդեցությունների կանխարգելմանը, կամ նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունում գնահատվել է հանքավայրի շահագործման ընթացքում հիմնական բնապահպանական և սոցիալական ազդեցությունները, ըստ աշխատանքների տեսակների հաշվարկվել են մթնոլորտ վնասակար արտանետումների քանակները և ներկայացվել են ազդեցությունների կանխարգելմանը, կամ նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ: Մթնոլորտում վնասակար նյութերի ցրման հաշվարկների համաձայն սպասվելիք գետնամերձ կոնցենտրացիաները գտնվում են բնակելի գոտիների համար սահմանված թույլատրելի նորմերի սահմաններում:

Նախքան արդյունահանման աշխատանքների սկսվելը բացահանքի տարածքի հողաբուական շերտը կհանվի և կտեղափոխվի այդ նպատակով հատկացված վայր, որը կօգտագործվի հետագայում ռեկուլտիվացիոն աշխատանքներում: Տվյալ տարածքին բնորոշ թիթեռնաձաղկավորների ու հացազգի խոտախառնուրդի ցանքը կնպաստի ճիմի առաջացմանը և կբարձրացի հողի հակաբողիոն հատկությունը:

Բացահանքի լեռնատեխնիկական վերականգնում իրականացվելու է շահագործման աշխատանքների ավարտից և պաշարների մարումից հետո: Այդ աշխատանքները ներառում են՝ էքսկավտորի միջոցով մակաբացման ապարների արտաքին լցակույտից տեղափոխվում մշակված տարածություն՝ բոլողելի օգնությամբ փողում և հարթեցում մակերեսին, այնուհետև այլ նպատակներով օգտագործելու համար հողային շերտով ծածկում:

Հարթեցվելու են նաև արդյունաբերական հրապարակի և ավտոճանապարհների մակերեսները: Ռեկովտիվացիայի ենթակա ընդհանուր տարածքը կկազմի 62.6 հա, իսկ աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ծախսերի խոշորացված նախահաշիվը նախագծում գնահատվել է՝ 3456.4 հազ.դրամ:

Հանքավայրի շահագործման ընթացքում և շահագործողական աշխատանքների ավարտից հետո շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունները կանխելու, կամ նվազեցնելու նպատակով նախագծում նախատեսվել են բնապահպանական միջոցառումներ, այդ թվում՝

- փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով՝ բացահանքի սահմաններից դուրս ավտոճանապարհների ջրցանում,

- դիգելային վառելիքով աշխատող լեռնատրանսպորտային մեքենաների և սարքավորումների վրա խլացուցիչների և ֆիլտրերի տեղադրում՝ առաջացող աղմուկի և ծխագագերի նվազեցման նպատակով

- նավթանյութերի արտահոսքը շրջակա միջավայր կանխելու նպատակով՝ վառելիքաբարուկային նյութերի պահեստավորում բետոնապատ հարթակի վրա:

Հահագործման ընթացքում առաջացող տարբեր բնույթի թափոնների հեռացման և տեղադրման հետ կապված հաշվետվությունում ներկայացվել են համապատասխան լուծումներ: Վտանգավոր թափոնները պետք է հավաքվեն և պահպանվեն հատուկ նախատեսված տարածքներում և տարողություններում՝ հետագայում վերամշակող ընկերություններին վաճառելու նպատակով: Կենցաղային աղբը և շահագործման ընթացքում առաջացող թափոնները պետք է սահմանված կարգով հեռացվեն՝ համապատասխան մարմինների հետ համաձայնեցված:

Ներկայացվել են միջոցառումներ՝ ուղղված անբարենպաստ օդերևութաբանական պայմանների և հնարավոր վթարային իրավիճակների դեպքում ազդեցությունների կանխարգելմանը, կամ նվազեցմանը:

Նախնական գնահատման հայտի և հաշվետվության փորձաքննության փուլերում նախագծային փաստաթղթերի վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Արագածավան համայնքում անցկացվել են հանրային քննարկումներ: Քննարկումների ընթացքում մասնակիցները դրական են գնահատել նախատեսվող գործունեության իրականացումը, քանի որ հանքավայրի շահագործումը որոշակիորեն կարող է նպաստել համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը՝ ստեղծելով լրացուցիչ աշխատանքային ռեսուրսներ: Բացի այդ, ընկերությունը նախատեսում է աջակցել համայնքի որոշ սոցիալ-տնտեսական ծրագրերի ֆինանսավորման գործընթացին:

Նախագծային փաթեթում ներկայացվել է բնապահպանական մշտադիտարկումների պլան, որում ներառված են՝ շահագործման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների նկատմամբ /մակերևույթային և ստորգետնյա ջրեր, մթնոլորտային օդ, հող, սոցիալական միջավայր և այլն/ կատարվող դիտարկումները, հաճախականությունը և իրականացման համար նախատեսվող ծախսերը, որը տարեկան գնահատվել է 250.0 հազ.դրամ:

Ամփոփելով գնահատման և փորձաքննության արդյունքները, պետք է նշել, որ նախագիծը մշակվել է բնապահպանական և ընդերքօգտագործման ոլորտները կարգավորող ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմատիվակրավական ակտերին համապատասխան: Հանքավայրի շահագործման ընթացքում էկոլոգիապես վնասակար, թույլատրելի նորմերը գերազանցող արտանետումներ և արտահոսքեր չեն առաջանա: Առաջարկվող տեխնոլոգիական լուծումների և հաշվետվությունում ներկայացված բնապահպանական և սոցիալական ազդեցությունների մեղմացման միջոցառումների ապահովման դեպքում, գործունեության իրականացման ընթացքում աղտոտվածությունը օդային և ջրային ավազանների, ինչպես նաև հողային ռեսուրսների վրա կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Հանքարդյունահանման աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է պարբերաբ իրականացնել շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների նկատմամբ մշտադիտարկումներ, կազմել հետնախագծային միջոցառումների իրականացման և վերլուծության հաշվետվություն, ինչը պետք է պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմիններին և հանրությանը:
- Զրօգտագործումը, շահագործման ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների տեղադրումը և հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀԻԴՐԵՆ ԳՈԼԴ» ՍՊԸ կողմից ներկայացված «Հ Արագածոտնի մարզի «Հ Արագածոտնի մարզի Արագածի պեղլիտի հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:



Տիգրան

Հ. Մկրտչյան